Եղիշե Չարենց

Հեռերա-երազ

(Էպիլոգ)

1

Երբ վեր սլացան հրոտ, հրակամ
Հրթիռները հուր, հրավարս ու հիր
Աստղային ծիրից նորից վայր ընկան
Ու դղյակը հին դարձրին մոխիր:

2

Ու ընկած էր նա մոխիրի վրա:
Ընկած էր մենակ: Ու լուռ էր չորս դին:
Մոխիրի վրա սպասում էր նա՝
Աչքերը հառած կույր, անդեմ մութին:
Եվ մեկը կարծես մոտեցավ նրան,

Մոտեցավ, խնդաց ու կանչեց միգում:
Հիշեց, որ կային չքացան-կորան
Աստղերը՝ հոգու երկնքում. հոգում:
Ու ժպտաց, ժպտաց ասպետը հանկարծ:
Ձեռքերը պարզեց այնքան մո՛տ է նա:
Գուցե բռնկվեն աստղերը հանգած
Ու նորից վառվեն մոխիրի վրա...
Ձեռքերը պարզեց ու լռեց միայն:
Ու խնդաց նորից սիրտը մշուշում:
Ու չկար ոչ-ոք: Թվում էր նրան
Աշխարհն էլ, ինքն էլ մի մութ վերհիշում:

3

Ու խո՛ր հեծկլտաց ասպետը, ընկած
Ճերմակ դղյակի մոխիրի վրա:
Ու հիշեց բոլոր աստղերը հանգած,
Ու հիշեց հրոտ հմայքը նրա:
Եկավ ու չկա: Բայց չէ՞ որ, երբ դեռ
Հրդեհն էր լափում դղյակը իր հին՝
Բոցերի ծովում մի ոսկի թիթեռ
Ջնգում էր, շաչում հրավարս մի կին:
Օ, թող գա՛, թող գա՛: Լինի արյունոտ:
Մեխվի իր սրտում, որպես քաղցր սուր:
Թող նորի՛ց վառվի համբույրը հրոտ
Ու հմայքը հուր...
Եվ թո՛ղ չլինի երազն աստղային
Ճերմակ դղյակի անմարմին ուրուն...
Եվ չէ՞ որ ոսկի կրակներ կային

Մեռնելուց առաջ նրա աչքերում...

4

Դու ինձ մոտ էիր: Ժպտացիր ու հուր
Համբույրի ժամին հոգիս՝ գոհ, դժգոհ՝
Ընկավ գիշերի խոռոչի մեջ խոր
Բայց օրհնում էի հրդեհները քո:
Ես օրհնում էի: Ժպտում էիր դու:
Ու հրդեհեցի իմ դղյակը հին,
Որ ի՛մը լինես, չդառնաս ուրու,
Որ ինձ մոտ մնաս՝ պարզ ու երկրային...
Բայց ո՞ւր գնացիր, ինչո՞ւ հեռացար:
Թ՞ե այստեղ ես դու, բայց մենակ եմ ես,
Ինչո՞ւ հեռացար ու ցնորք դարձար՝
Հեռավո՛ր ուրու անմարմին, անտես:
* * * * * * * * * * * *
* * * * * * * * * * * *
Ճերմակ դղյակի մոխիրի վրա,
Հիշելով ոսկի հրթիռը մարած
Անզոր շշնջում ու կանչում էր նա.
Հետե՛ր-ցնորք, հետե՛ր-երազ...

1916